ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«22» նոյեմբեր 2017թ. No 3334 - Ա

2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐ ՏԵՂԱԴՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՈՒՆԵՑՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿԱՄ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի 10-րդ կետը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի թիվ 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 49-Ն հրամանի N 1 հավելվածով հաստատված բժշկական օգնության և սպասարկման պետական պատվերի տեղադրման կարգի 3-րդ և 21-րդ կետերը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել՝
   1) 2018 թվականին բժշկական օգնության և սպասարկման պետական պատվեր տեղադրող հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի,
   2) բժշկական օգնության և սպասարկման համապատասխան լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն 2018 թվականի

պետական պատվերի տեղադրման հայտերի ներկայացման ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ Զարուհի Դարբինյանին՝

1) ապահովել սույն հրամանի առաքումը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ենթակայության բժշկական կազմակերպություններին, Երևանի քաղաքապետարանի և ՀՀ մարզպետարանների աշխատակազմեր:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

Լ. ԱԼԹՈՒՆՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ առողջապահության նախարարի
«22» նոյեմբերի 2017թ. N 3334 - Ա հրամանի

ԿԱԶՄ
2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐ ՏԵՂԱԴՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Նելսոն Զուլոյան	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար (նախագահ)
Դավիթ Մելիք-Նուբարյան	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի բժշկական օգնության քաղաքականության վարչության պետի ժ/պ (քարտուղար)
Ծաղիկ Վարդանյան	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի պետական առողջապահական գործակալության պետ
Կարեն Կոստանյան	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ
Էմին Ավետիսյան	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության իրավաբանական վարչության պետ
Սամվել Սողոմոնյան	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության պետ
Անի Հարությունյան	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժ/պ
Ռաֆայել Վարդանյան	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի ժ/պ

Հավելված N 2
ՀՀ առողջապահության նախարարի
«22» նոյեմբեր 2017թ. N 3334 - Ա հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՈՒՆԵՑՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿԱՄ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

Օր, ամիս, տարի	**22.11.2017թ.- 04.12.2017թ.**